



ԵԱԲԴ/0434/06/17

ՈՐՈՇՈՒՄ

Մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ այն դրա այլընտրանքային փախանման միջոց գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը քննելու վերաբերյալ

03.10.2017թ.

ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը՝ նախագահող դատավոր Զ.Նախչարյանի, քարտուղարությանը՝ Մ.Սամսոնյանի, մասնակցությամբ՝ ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով դատախազ Վ.Դուրմազյանի, պաշտպան՝ Ե.Սարգսյանի, դռնփակ դատական նիստում քննելով մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ այն դրա այլընտրանքային փախանման միջոց գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը,

Պարզեց



Ըստ ներկայացված միջնորդության՝ 12.09.2017թ թվականին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը դռնփակ դատական նիստում քննության առնելով նույն ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ժ.Թովմասյանի միջնորդությունը՝ թիվ 58155517 քրեական գործով մեղադրյալ Թաթուլ Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ, նույն օրը կայացրած որոշմամբ մասնակի բավարարել է այն՝ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելով 17 օր ժամկետով:

Միաժամանակ, նույն որոշմամբ դատարանը մերժել է պաշտպանության կողմից միջնորդությունը՝ կալանավորումը գրավով փոխարինելու մասին:

Գտնում է, որ ներկայումս վերացել են ինչպես Թաթուլ Գևորգյանին կալանքի տակ պահելու, այնպես էլ նրա նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ հիմքերը, ուստի նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը ենթակա է վերացման կամ այն պետք է փոխարինվի դրա այլընտրանքային խափանման միջոց գրավով:

Այսպես, որպես Թաթուլ Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետը հերթական անգամ երկարացնելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին 07.09.2017թ. որոշման հիմնավորում վարույթն իրականացնող մարմինը նշել է հետևյալը. «Գնահատելով սույն գործով ձեռք բերված փաստական տվյալները և նկատի ունենալով, որ՝

1/ Առկա է Թաթուլ Գևորգյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով /երկու դրվագ/ և 311-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքներ կատարած լինելու հիմնավոր կասկած, չեն վերացել նրան կալանքի տակ պահելու հիմքերը և, որ նա ազատության մեջ մնալով կարող է՝

2/ Խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով, որպիսի հավանական վարքագծի մասին հիմք է տալիս ենթադրելու Թաթուլ Գևորգյանին մեղսագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, հանցագործության ծանրությունը, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի ժամկետն առավելագույնը 7 տարի է, ինչն էականորեն բարձրացնում է հավանականությունը, որ նա կարող է խոչընդոտել գործի քննությանը: Բացի այդ, անձնական այլ շահագրգռվածությամբ կամ կաշառք ստանալու դիմաց նույնանման եղանակով այլ տնտեսվարող սուբյեկտների օգտին հանցավոր արարքներ կատարելու դեպքերը բացահայտելու ուղղությամբ կատարվել և կատարվում են համապատասխան քննչական գործողություններ, որպիսի պայմաններում, հաշվի առնելով, մինչ ձերբակալվելը շուրջ 7 տարի աշխատելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչության կամխատեսումների և հավաքագրումների բաժնում որպես հարկային տեսուչ, մտերիմ հարաբերությունների մեջ գտնվելով նույն բաժնի աշխատակիցների և տնտեսվարող սուբյեկտների հետ, բավարար հիմք է ենթադրելու, որ ազատության մեջ հայտնվելու դեպքում անձանց որոշակի շրջանակի հետ իր ունեցած անձնական կապերն օգտագործելով կամ անձամբ կարող է հանդգնելու,

հարկադրելու կամ այլ անօրինական եղանակով ներգործել ինչպես 33 ԿԱ Աշտարակի ՏԴՏ կանխատեսումների և հավաքագրումների բաժնի աշխատակիցների, այնպես էլ գործով պարզման ենթակա հանգամանքների հետ առնչվող և դրանց մասին տեղեկություններ ունեցող անձանց վրա՝ վերջիններիս կողմից իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ տալու կամ ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար, որպիսի գործողությունները կարող են ազդել գործի օբյեկտիվ ճշմարտությանը բացահայտմանը»:

Ինչպես ակնհայտ է, Թաթուլ Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու համար քննիչն առկա է համարել միայն հետևյալ հիմքը, որ նա ազատության մեջ մնալու դեպքում կարող է խոչընդոտել մինչդարձական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

Ընդ որում, որպես այդ հիմքերի հիմնավորումներ նշել է մեղսագրվող հանցագործությունների համար նախատեսված պատժի խստությունը՝ մինչև 7 տարի ժամկետով ազատազրկումը, իր պաշտոնի կապակցությամբ ձևավորված հեղինակությունը և կապերը, ինչպես նաև նրա կողմից նմանատիպ այլ հանցավոր արարքներ կատարելու հանգամանքները բացահայտելու նպատակով նոր քննչական գործողություններ կատարելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է Թաթուլ Գևորգյանին մեղսագրվող արարքներին համար նրան սպառնացող պատժին, ապա հարկ է նշել, որ չնայած Թաթուլ Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել 33 քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով /2 դրվագ/ և 311-րդ հոդվածի 2րդ մասով, սակայն դեռևս նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Դատարանի 20.05.2017թ. որոշմամբ, ինչպես նաև նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ հետագա 2 որոշումներում Դատարանն արձանագրել է, որ 33 քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով Թաթուլ Գևորգյանին առաջադրված մեղադրանքի առնչությամբ հիմնավոր կասկածը բացակայում է:

Դատարանը 12.09.2017թ. կայացրած որոշմամբ այդ մասով արձանագրել է հետևյալը. «Դատարանն ուսումնասիրելով 33 քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով Թ.Գևորգյանին առաջադրված մեղադրանքի առնչությամբ հիմնավոր կասկածի հարցը, գտնում է, որ միջնորդությանը կից ներկայացված նյութերը որևէ նյութով չեն համալրվել և մեղադրանքի այդ մասով որևէ լրացուցիչ փաստարկ, որը դատարանը քննած չի եղել մեղադրյալ Թ.Գևորգյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորումն ընտրելիս քննարկելիս, չի ներկայացվել, որպիսի պայմաններում նախաքննության մարմնին դարձյալ չի հաջողվել դատարանի առջև ապացուցել մեղադրանքի այդ մասով հիմնավոր կասկածի առկայությունը: Ընդ որում, դատարանը նման եզրահանգման է եկել հաշվի առնելով, որ տվյալ դեպքում միջնորդությանը կից չի ներկայացվել որևէ նյութ առ այն, որ ենթադրյալ հանցագործության և մեղադրյալ Թաթուլ Գևորգյանի գործողությունների միջև առկա են օբյեկտիվ կապը հաստատող որևէ տեղեկություններ կամ փաստական տվյալներ»:

Այստեղ տեղին է համարում նշել, որ չնայած դատարանի նախորդ 3 որոշումները, որոնցում հաստատված են համարվել 33 քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրվող արարքում հիմնավոր կասկածի առկայությունը, դատախազի կողմից չեն բողոքարկվել վերաքննիչ դատարան և այդ որոշումները մտել են օրինական ուժի մեջ, սակայն վարույթն իրականացնող մարմինն, անտեսելով դատարանի օրինական ուժի մեջ մտած այդ որոշումները, յուրաքանչյուր անգամ Թ.Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն ներկայացնելիս նույն փաստական տվյալները ներկայացնելով կրկին պնդել է, թե իբր այդ մեղադրանքի մասով հիմնավոր կասկածը ևս առկա է:

Ինչևէ, քանի որ դատարանի կողմից արձանագրվել է, որ նշված մեղադրանքի մասով հիմնավոր կասկածը բացակայում է, ուստի անհիմն է դառնում նաև քննիչի այն պատճառաբանությունը, թե իբր հանցագործության ծանրությունը, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի ժամկետն առավելագույնը 7 տարի է, էականորեն բարձրացնում է հավանականությունը, որ Թ.Գևորգյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը, քանզի 33 քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքը դասվում է միջին ծանրության հանցագործությունների շարքին և պատիժ է նախատեսում ոչ միայն ազատազրկման ձևով՝ մինչև 4 տարի ժամկետով, այլ նաև՝ տուգանքի ձևով, որպիսի պարագայում վերանում է նաև նախաքննական մարմնի այն հիմնական պատճառաբանությունը, որ նախատեսված պատժի խստությունից ելնելով Թաթուլ Գևորգյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը:

Գործի քննությանը խոչընդոտելու հավանականության վերաբերյալ քննիչի հաջորդ պատճառաբանությունը կայացել է նրանում, որ անձնական այլ շահագրգռվածությամբ կամ կաշառք ստանալու դիմաց նույնանման եղանակով այլ տնտեսավարող սուբյեկտների օգտին հանցավոր արարքներ կատարելու դեպքերը բացահայտելու ուղղությամբ կատարվել և



կատարվում են համապատասխան քննչական գործողություններ, որպիսի պայմաններում, հաշվի առնելով, մինչ ձեռքբերվելը շուրջ 7 տարի աշխատելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչության կանխատեսումների և հավաքագրումների բաժնում որպես հարկային տեսուչ, մտերիմ հարաբերությունների մեջ գտնվելով նույն բաժնի աշխատակիցների և տնտեսվարող սուբյեկտների հետ, բավարար հիմք է ենթադրելու, որ ազատության մեջ հայտնվելու դեպքում անձանց որոշակի շրջանակի հետ իր ունեցած անձնական կապերն օգտագործելով կամ անձամբ կարող է համոզելու, հարկադրելու կամ այլ անօրինական եղանակով ներգործել ինչպես ՀՀ ԿԱ Աշտարակի ՏՀՏ կանխատեսումների և հավաքագրումների բաժնի աշխատակիցների, այնպես էլ գործով պարզման ենթակա հանգամանքների հետ առնչվող և դրանց մասին տեղեկություններ ունեցող անձանց վրա՝ վերջիններիս կողմից իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ տալու կամ ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար, որպիսի գործողությունները կարող են ազդել գործի օբյեկտիվ ճշմարտությանը բացահայտմանը:

Քննիչի այս պատճառաբանությունների մասով դատարանում միջնորդության քննարկման ժամանակ հայտարարել են, որ կոնկրետ թաթուլ Գևորգյանին առաջադրված մեղադրանքների մասով որևէ նոր քննչական գործողություն կատարելու, որևէ վկայի հարցաքննելու անհրաժեշտության մասին քննիչը չի նշել, առավել ևս, թաթուլ Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետները երկարացնելու վերաբերյալ քննիչի նախորդ երկու միջնորդությունները դատարանի կողմից մասնակի են բավարարվել և յուրաքանչյուր անգամ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել էր մեկ ամիս ժամանակով, որպեսզի վարույթն իրականացնող մարմինը կատարի այդ մեղադրանքների հետ կապված բոլոր անհրաժեշտ քննչական գործողությունները:

Առավել հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքների մասով որևէ նոր քննչական գործողություն կատարելու և որևէ վկայի հարցաքննելու անհրաժեշտության մասին քննիչի կողմից չի նշվել ո՛չ թաթուլ Գևորգյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, ո՛չ էլ նրան կալանքի տակ պահելու ժամկետները երկարացնելու վերաբերյալ հետագա երեք միջնորդություններում, քանի որ այդ ենթադրյալ հանցագործությունների մասով անհրաժեշտ բոլոր քննչական գործողությունները կատարվել և անհրաժեշտ բոլոր անձինք հարցաքննվել էին դեռևս նախաքննության հենց սկզբնական փուլում:

Նշել է նաև, որ թաթուլ Գևորգյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 20.05.2017թ. որոշմամբ դատարանն արձանագրել է հետևյալը. «Դատարանը հաշվի է առնում, որ նախաքննությունը դեռևս վաղ փուլում է գտնվում և ենթակա է հետազոտման և ուսումնասիրման նախաքննությամբ ազգրավված նյութերը, որպիսի ուսումնասիրությամբ պայմանավորված են մի շարք այլ քննչական գործողություններ, որոնց ընթացքում մեղադրյալ թաթուլ Գևորգյանը՝ որպես տարածաշրջանում հեղինակություն վայելող անձ, կարող է խոչընդոտներ ստեղծել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով, հետևաբար միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման, /.../»:

Դրանից հետո, դատարանի կողմից 11.07.2017թ. մասնակի է բավարարվել նաև թ. Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը, քանի որ դատարանը գտել էր, որ. «Քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար, ինչպես նաև մեղադրյալի գործողությունների ճշգրիտ որակման համար անհրաժեշտ է հարցաքննել խուզարկությունների արդյունքում հայտնաբերված մնացած սուբյեկտվարող անձանց, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար և որպիսի գործընթացին կարող է վկաների նկատմամբ ապօրինի ազդեցություն գործադրելու միջոցով խոչընդոտել մեղադրյալը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում, սակայն այդ գործողությունները կատարելու համար բավարար է առավել կարճ ժամկետ» /տե՛ս դատարանի 11.07.2017թ. որոշման պատճառաբանական մասը/:

Դրանից հետո դատարանի կողմից 11.08.2017թ. մասնակի է բավարարվել նաև թ. Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ քննիչի 2-րդ միջնորդությունը, քանի որ դատարանը գտել էր, որ ազատության մեջ գտնվելու դեպքում նա կարող է խոչընդոտել գործի քննությանը, ապա նաև նշել էր. «Մեղադրյալի հավանական վարքագծի վերաբերյալ հետևությունը բխում է այն հանգամանքից, որ թաթուլ Գևորգյանի բնակարանից խուզարկությամբ հայտնաբերվել են թվով 51 տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ հաշվապահական փաստաթղթեր, այդ կապակցությամբ նախաքննությունը դեռևս գտնվում է ապացույցների հավաքման և ստուգման փուլում և քրեական գործով տվյալ պայմաններում դեռևս առկա է նախաքննության ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտության վտանգի հավանականությունը» /տե՛ս դատարանի 11.08.2017թ. որոշման պատճառաբանական մասը/:

Այնուհետև, դատարանը 12.09.2017թ. 3-րդ անգամ բավարարել է քննիչի միջնորդությունը թաթուլ Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ և այդ կապակցությամբ իր որոշման մեջ նշել է հետևյալը. «Ինչ վերաբերում է նախաքննությանը խոչընդոտելու հավանականությանը, ապա միջնորդություն հարուցած անձը փաստարկել է, մեղադրյալի կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման անհրաժեշտությունը նրանով, որ դեռևս կան քննչական գործողություններ և գործով չհարցաքննված վկաներ, որպիսի քննչական գործողություններից կախված կարող է մեղադրանքի ծավալը փոփոխվել»:

Բացի այդ, նախաքննության ավարտ հայտարարելու համար քրեադատավարական օրենքում նախատեսված մի շարք ժամկետներ, այդ թվում՝ գործը դատարան ուղարկելու համար, որոնք պետք է պահպանվեն, որպիսի պայմաններում, դատարանը գտնում է, որ քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար, ինչպես նաև մեղադրյալի գործողությունների ճշգրիտ որակման համար դեռ անհրաժեշտ են որոշակի քննչական գործողություններ, որպիսի գործընթացին կարող է խոչընդոտել մեղադրյալը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում /.../»:

Ինչպես ակնհայտ է, որ դատարանն իր բոլոր որոշումներում, առաջին իսկ պահից սկսած, հստակ արձանագրել է, որ նախաքննության սկզբնական փուլում կամ դրա ընթացքում դեռևս անհրաժեշտ են կատարել մի շարք քննչական և դատավարական գործողություններ և ապահովել քրեական գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը, որի ընթացքում առկա է վտանգ, որ թաթուլ Գևորգյանն ազատության մեջ մնալու դեպքում կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով:

Միաժամանակ հարկ է նշել, որ բոլոր դեպքերում էլ դատարանը մերժել է պաշտպանության կողմի միջնորդությունը թաթուլ Գևորգյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ հենց այն պատճառաբանությամբ, որ առկա է վտանգ, որ նախաքննության ընթացքում ազատության մեջ գտնվելու դեպքում նա կարող է խոչընդոտել գործի քննությանը:

Մասնավորապես դատարանն իր 12.09.2017թ. որոշման մեջ այս կապակցությամբ նշել է հետևյալը. «Այս առումով դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում դատարանի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար վերը նշված հիմքերով արտահայտած վտանգը չի կարող չեզոքացվել գրավը թույլատրելի ճանաչվելու դեպքում»:

Այլ կերպ ասած, տվյալ դեպքում գրավը չի կարող երաշխիք հանդիսանալ մեղադրյալ թաթուլ Գևորգյանի օրինական վարքագիծն ապահովելու համար և գրավը թույլատրելի ճանաչելու դեպքում կպահպանվի վտանգը մեղադրյալ թաթուլ Գևորգյանի կողմից նախաքննությանը խոչընդոտելու՝ գործին մասնակցող անձանց նկատմամբ ապօրինի ազդեցություն գործադրելու միջոցով, որի պայմաններում պաշտպանի միջնորդությունը՝ գրավի թույլատրելի ճանաչելու վերաբերյալ, ենթակա է մերժման»:

Չայտնել է, որ գրավի կիրառումն անթույլատրելի համարելու վերաբերյալ դատարանի միակ պատճառաբանությունն ըստ էության այն է եղել, որ արդեն իսկ հաստատվել է այն հանգամանքը, որ ազատության մեջ մնալու դեպքում թ. Գևորգյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ.

«Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Չետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված է, որ.

« 3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ. «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:



Իսկ Պունգելտն ընդդեմ Չեխիայի գործով կայացրած նախադեպային որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Յուրաքանչյուր անգամ, երբ մեղադրյալը ներկայանում է դատարանի կամ օրենքով լիազորված դատական այլ պաշտոնատար անձի առջև, 5(3) հոդվածի համաձայն, դատավորը կամ դատական պաշտոնատար անձը պարտավոր են մանրամասնորեն քննության առնել կալանքը շարունակելու համար ներկայացվող պատճառաբանությունները, ինչպես նաև պաշտպանական կողմի՝ ազատ արձակումը հիմնավորող փաստարկները»:

Վերոգրյալի հիման վրա հարկ է համարում հատուկ ընդգծել, որ Թաթուլ Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետը Դատարանի կողմից 12.09.2017թ. երկարացնելուց 3 օր անց՝ 16.09.2017թ., քննիչի կողմից պաշտպանության կողմին հայտարարվել է նախաքննության ավարտման վերաբերյալ և քրեական գործի նյութերը ներկայացվել են մեր ծանոթացմանը:

Տեղին է նշել, որ ԳԳ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ. «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Վերը նշվածից ակնհայտ է, որ եթե նախաքննական մարմինը հայտարարել է նախաքննության ավարտման վերաբերյալ, ապա դա նշանակում է, որ վերջինս ձեռնարկել է քրեական գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի բացահայտման համար անհրաժեշտ բոլոր քննչական և դատավարական գործողությունները, ուստի այս պայմաններում վերացել են նաև Թաթուլ Գևորգյանին կալանավորելու, նրան կալանքի տակ պահելու ժամկետները երկարացնելու, ինչպես նաև նրա նկատմամբ գրավի կիրառումն անօրյատրելի ճանաչելու վերաբերյալ Դատարանի 20.05.2017թ., 11.07.2017թ., 11.08.2017թ. և 12.09.2017թ. որոշումներում նշված հիմքերն ու հիմնավորումները, ուստի Թաթուլ Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը ենթակա է վերացման կամ այն ենթակա է փոխարինման դրա այլընտրանքային խափանման միջոց գրավով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Սկոտն ընդդեմ Իսպանիայի գործով որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է հետևյալը. «Դատարանն ընդունում է, որ քննությանը միջամտելը, ինչպես նաև հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածը կարող էին վարույթի սկզբում բավարար լինել դիմողի կալանքը թույլատրելու համար: Սակայն, երբ վարույթը սկսեց զարգանալ և ապացույցների հավաքելը ավարտվեց, այդ հիմքերն ի վերջո ավելի պակաս նպատակահարմար դարձան» / Սկոտն ընդդեմ Իսպանիայի գործով, 1998թ. դեկտեմբերի 18, 1996-IV Ձեկույցները, էջեր 2399-2400/:

Անդրադառնալով Թաթուլ Գևորգյանի անձը բնութագրող տվյալներին, նշել է, որ մեղադրյալ Թաթուլ Գևորգյանը ունի մշտական բնակության վայր, նախկինում դատված չի եղել, բնութագրվում է դրականորեն, ավելին՝ Երկրապահ կամավորականների միության Աշտարակի բաժանմունքի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Թաթուլ Գևորգյանը 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմին՝ ապրիլի 4-ին գտնվել է ԼԴԴ Հաղորդի գորամասում, ցուցաբերելով իր նյութական և բարոյական աջակցությունը՝ Երկրապահ կամավորականների միության Աշտարակի ջոկատին:

Ավելին, նրա խնամքի տակ են գտնվում 5 անձ՝ երեք անչափահաս երեխաները՝ 2001 թվականին ծնված Արայիկ Թաթուլի Գևորգյանը, 2003 թվականին ծնված Գագիկ Թաթուլի Գևորգյանը և մանկահասակ՝ 2016 թվականին ծնված Անահիտ Թաթուլի Գևորգյանը, կինը՝ Ասյա Ջաքարյանը, ինչպես նաև կենսաթոշակառու և զառամյալ մայրը՝ Քնրուշ Գևորգյանը, ովքեր Թ.Գևորգյանին արգելանքի վերցնելու հետևանքով մնացել են առանց խնամքի և զոյատևման միջոցների:

/Համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են դատարան/:

ԳԳ քրեական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ. «Անչափահասները, ինչպես նաև անաշխատունակ անձինք, որոնք ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել են առանց զոյատևման միջոցների, ունեն խնամքի իրավունք, որը նշված մարմինը պարտավոր է նրանց ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին»:

Նշել է, որ Թաթուլ Գևորգյանի կինը՝ Ասյա Ջաքարյանն այս պահին ժամանակավորապես անաշխատունակ է, քանի որ գտնվում է արձակուրդի մեջ՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար, բացի այդ՝ ամուսնուն արգելանքի վերցնելուց հետո միակ անձն է ով կարող է և պարտավոր է խնամել ու դաստիարակել իրենց անչափահաս երեխաներին՝ համապատասխան փաստաթուղթը և ներկայացվել է դատարան/:



Այս առումով հարկ են համարում նշել, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն. «Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին:

Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին»:

Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ծնողի կողմից երեխայի դաստիարակության պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 77-րդ հոդվածով սահմանված է, որ. «Ամուսինները պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց:

Այդպիսի օժանդակությունը մերժվելու և ալիմենտ վճարելու վերաբերյալ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դրա համար անհրաժեշտ միջոցներ ունեցող մյուս ամուսնուց դատական կարգով ալիմենտ պահանջելու իրավունք ունի՝

(...)

բ) կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը.

(...) »:

Այսինքն, ստացվում է, որ Թաթուլ Գևորգյանն արգելանքի վերցվելու հետևանքով ոչ միայն չի կարող խնամել և դաստիարակել իր անչափահաս, այդ թվում՝ մեկ մանկահասակ երեխաներին, այլ նաև չի կարող կատարել իրենց՝ մեկ տարեկան ընդհանուր երեխային խնամող կնոջը նյութապես օժանդակելու, զոնե նրանց առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ նյութական միջոցներ տրամադրելու իր պարտականությունը:

«Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ կենսաապահովման նվազագույն զամբյուղը դա մարդու առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ՝ միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների կազմն ու կառուցվածքը սահմանող նվազագույն քանակն է, իսկ կենսաապահովման նվազագույն բյուջեն՝ միջազգայնորեն ընդունված կենսաապահովման նվազագույն զամբյուղի դրամական արժեքը:

Նշել է նաև, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2017 թվականի առաջին եռամսյակի միջին ընթացիկ գներով յուրաքանչյուր անձի համար ամսական կտրվածքով կազմում է 59918 դրամ /համապատասխան հրապարակումն առկա է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային կայք-էջում՝ www.armstat.am/:


Այսինքն, Թաթուլ Գևորգյանի ժամանակավոր անաշխատունակ կնոջ և անչափահաս երեխաներից /բացառությամբ մեկ տարեկան երեխայի/ յուրաքանչյուրի համար պետական բյուջեի միջոցներից ամսական պետք է հատկացվի 59918 դրամ, իսկ մեկ տարեկան երեխայի համար՝ 41.918 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով, որ նրա խնամքի համար պետությունն արդեն իսկ ամսական հատկացնում է 18.000 ՀՀ դրամ գումար:

Վերը նշված հիմնավորումներից ելնելով 20.05.2017թ. վարույթն իրականացնող մարմնին գրավոր միջնորդել են. «Որոշում կայացնել՝ Թաթուլ Գևորգյանի անչափահաս երեխաների, ժամանակավոր անաշխատունակ կնոջ գոյատևման միջոցները ՀՀ պետական բյուջեի հաշվին ապահովելու վերաբերյալ՝ մեկ տարեկան երեխային ամսական հատկացնելով 41.918 ՀՀ դրամ, իսկ մյուս անձանցից յուրաքանչյուրին՝ ամսական հատկացնելով 59.918 ՀՀ դրամ»:

Տեղին է նշել, որ 25.05.2017թ. ստացել է ՀԿԳ ավագ քննիչ Ժ.Թովմասյանի որոշումը, որով վերջինս մերժել է վերը նշված միջնորդությունը, պատճառաբանելով, թե Թաթուլ Գևորգյանի երեխաների գոյատևման միջոցների ապահովման պարտականություն կրող ծնողներից մեկը՝ Ասյա Ջաքարյանն աշխատունակ է և բնակվում է երեխաների հետ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ պետական բյուջեի հաշվին ապահովվում է, երբ անչափահասները, ինչպես նաև անաշխատունակ անձինք զրկված են ծնողներից կամ կերակրողից:

Ակնհայտ է, որ քննիչի այս հիմնավորումը որևէ քննադատության չի կարող դիմանալ, քանզի որ մինչև երեք տարեկան երեխային խնամելու անհրաժեշտությունից ելնելով Թաթուլ Գևորգյանի կինը նույնիսկ չի կարող աշխատել, օրենքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխային խնամելու համար գտնվում է արձակուրդի մեջ, ուստի պետության կողմից հատկացվող ամսական 18.000 ՀՀ դրամով չի կարող ապահովել իր և երեք երեխաների խնամքը և գոյատևման համար անհրաժեշտ միջոցները:

Ըստ քննիչի, ստացվում է, որ Թաթուլ Գևորգյանի կինը պետք է դատարանի իր՝ դեռևս 2 տարին չլրացած երեխայի խնամքը, զնա աշխատանքի, որպեսզի կարողանա իր և երեք



երեխաների գոյատևման համար մինիմալ միջոցներն ապահովի, ինչը, մեղմ ասած, անտրամաբանական է, և նման մոտեցումը հարիր չէ պետական մարմնին:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով սահմանված է, որ «Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են»:

Այնհայտ է, որ Թաթուլ Գևորգյանի անձը բնութագրող հանգամանքները, ինչպես նաև այն հանգամանքները, որոնցում նա գտնվում է, վերը նշված հիմնավորումների համատեքստում նույնպես ի չիք են դարձնում այն մտավախությունները, որ ազատ արձակվելու դեպքում նա կարող է խոչընդոտել գործի քննությանը և հասարակական շահի տեսանկյունից նրան ազատ արձակելու խիստ անհրաժեշտություն են ձևավորում:

Վերը նշվածը ՄԻԵԴ-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում դիտարկելու դեպքում, առավել քան ակնհայտ է, որ անհրաժեշտ է վերացնել Թ.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը կամ այն փոխարինել դրա այլընտրանքային միջոց՝ գրավով, այլապես նրան հետագա կալանքի տակ պահելը պատժի տարրեր է պարունակում և ՄԻԵԴ 5-րդ հոդվածի խախտման է հանգեցնում:

Վերոգրյալի հիման վրա միջնորդել է վերացնել Թաթուլ Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը կամ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինել գրավով՝ սահմանելով գրավի չափը:

Պաշտպանը միջնորդեց իր ներկայացրած միջնորդությունը քննել մեղադրյալի բացակայությամբ, հաշվի առնելով, որ Թաթուլ Գևորգյանն իրեն հայտնել է, որ չի ցանկանում մասնակցել դատական նիստի, որի դեմ չառարկեց դատախազ Վ.Դովմազյանը, որպիսի միջնորդությունը դատարանը բավարարել է և միջնորդությունը քննել Թ.Գևորգյանի բացակայության պայմաններում:

Դատախազ Վ.Դովմազյանը, առարկելով պաշտպանի միջնորդության դեմ, հայտնեց, որ 23.09.2017 թվականին գործը հանձնվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանին, իսկ սույն նիստի մասին ժամուցումը դատարանում ստացվել է 27.09.2017 թվականին, հետևաբար նրա իրավասությունից դուրս էր մեղադրյալի ներկայությունն ապահովելը սույն դատական նիստով:

Հայտնեց, որ միջնորդությունն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Նշել է, որ դատարանն արդեն բազմիցս որոշում է կայացրել և համարել է հնարավոր մեղադրյալ Թաթուլ Գևորգյանի ազատության մեջ գտնվելու դեպքում վկաների վրա ազդեցություն գործադրելը, այդ վտանգը պահպանվում է նաև գործը դատարան հանձնելուց հետո: Հայտնեց, որ մեղադրյալ Թաթուլ Գևորգյանի կինը մեղադրյալի բնակարանից հայտնաբերած տնտեսավարող սուբյեկտների հետ առնչություն է ունեցել և զբաղվել է այդ տնտեսավարող հաշվապահական գործերով և նրա նկատմամբ քրեական գործ չի հարուցվել գումարի չափի կապակցությամբ:

Դատարանի այն հարցին, թե ինչ կերպ է այդ հանգամանքը վերաբերվում քննարկվող միջնորդությանը և ինչպիսի քրեադատավարական գնահատական է տրվել մեղադրյալ Թ.Գևորգյանի կնոջ գործողություններին և ինչ ակտով, չկարողացավ պատասխանել: Նաև պարզաբանեց, որ Թաթուլ Գևորգյանի մեղադրանքը փոփոխվել է և ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով ավելացել է ևս մեկ դրվագ, մնացած մասով մեղադրանքը թողնվել է անփոփոխ և հենց այդ վիճակով նախաքննությունն ավարտվել է: Հայտնեց, որ մինչդատական վարույթում կալանավորման կիրառման համար հիմքերը շարունակում են արդիական մնալ նաև դատաքննության փուլում և հաշվի առնելով մեղադրյալի անձը, վերջինիս կողմից հարկային տեսչությունում աշխատելու հանգամանքը, բարձր է՝ հավանականությունը որ նա կարող է անօրինական ազդեցություն գործադրել վկաների նկատմամբ:

Դատարանի այն հարցին, թե նախաքննության ավարտից հետո արդյո՞ք բավարար է նույն հիմնավորումը, որը բերվել է կալանավորման ժամկետի երկարացման միջնորդություններով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման տեսանկյունից, պատասխանեց, որ բավարար է:

Դատախազը դատական նիստով հայեց, նաև որ օրենքը չի զրկում դատարանում Թաթուլ Գևորգյանին մեղսագրվող արարքը որակել այլ կերպ, սակայն նախաքննության մարմինը համոզված է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը հիմնավոր է և գործողությունները մեղադրյալի ծիշտ են որակված:

Դատարանին ներկայացրեց առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին, ինչպես նաև անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին 16.09.2017 թվականի որոշումների պատճենները, ինչպես նաև 23.09.2017 թվականին հաստատված մեղադրական եզրակացության պատճենը:



Պաշտպան Ե.Սարգսյանը, պնդելով իր միջնորդությունը, դատական նիստով հայտնեց, որ նախաքննության մարմինը նախաքննության ավարտ հայտարարելով և դատախազությունը հաստատելով մեղադրական եզրակացությունը, համարել են, որ գործով իրականացվել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն ԳԳ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի դրույթներին համաձայն: Այլ կերպ ասած՝ նախաքննության մարմինը գործը հանձնել է դատարան՝ համոզված լինելով, որ գործով ձեռք բերված ապացույցներն ամբողջական են և բավարար:

Պաշտպան Ե.Սարգսյանը հայտնեց, որ դատարանն իր որոշումներով արդեն իսկ անդրադարձել է հիմնավոր կասկածի ԳԳ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով, որը սակայն անտեսվել է նախաքննության մարմնի կողմից:

Ինչ վերաբերվում է քրեական գործով վկաների նկատմամբ ազդեցություն գործադրելուն, ապա նախաքննության փուլում հարցաքննված վկաները ցուցմունք են տվել այն մասին, որ մեղադրյալ Թաթուլ Գևորգյանի հետ ծանոթանալիս տեղեկություն չեն ունեցել նրա զբաղեցրած պաշտոնի և աշխատավայրի մասին, իսկ վկաներից Արտավազդ Աբրահամյանը հայտնել է, որ ինքն է ճշտել Թաթուլ Գևորգյանի աշխատավայրը սեփական նախաձեռնությամբ:

Նշել է, որ սույն գործով վկաների ցուցմունքները բարենպաստ են մեղադրյալ Թաթուլ Գևորգյանի համար, հետևաբար նրանց նկատմամբ որևէ ազդեցություն գործադրելն իմաստագուրկ է:

Հայտնեց, որ մեղադրանքի հիմքում հիմնավորապես դրված է գաղտնալսման արձանագրությունը, որպիսի ապացույցի նկատմամբ որևէ ազդեցություն գործադրել տեխնիկապես հնարավոր չէ:

Վկայակոչելով Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումը՝ հայտնեց, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է գնահատի ինչպես անձը բնութագրող հանգամանքները, այնպես էլ հիմնավոր կասկածի առկայությունը:

Տվյալ դեպքում, պահանջում է դատարանից վերացնել իր պաշտպանյալի նկատմամբ կիրառված կալանավորումը, որի վերաբերյալ, թեև գործող քրեադատավարական օրենքով ընթացակարգ նախատեսված չէ, սակայն նման հնարավորություն դատարանին վերապահված է Եվրոպական դատարանի կայացրած որոշումներով, իսկ այդ միջնորդությունը բավարարելու դեպքում, խնդրեց գրավը ճանաչել թույլատրելի և սահմանել գրավի չափ մինչև 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

Դատարանը, քննության առարկա դարձնելով մեղադրյալ Թաթուլ Գևորգյանի պաշտպանի միջնորդությունը՝ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ այն դրա այլընտրանքային փախանման միջոց գրավով փոխարինելու մասին, եկավ հետևյալ եզրահանգումներին:

Ընդհանուր իրավասության դատարանը մինչդատական կարգով գրավը թույլատրելի ճանաչելու միջնորդությունը քննարկելիս՝ պաշտպանի միջնորդությամբ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ չունի իրավասության վերացնել կիրառված խափանման միջոց կալանավորումը, քանզի նման ընթացակարգ նախատեսված չէ գործող ԳԳ քրեական դատավարության օրենսգրքով, որպիսի պայմաններում պաշտպան Երեն Սարգսյանի միջնորդությունը՝ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու մասով ենթակա է մերժման:

Անդրադառնալով գրավը թույլատրելի ճանաչելու միջնորդության պահանջին՝ դատարանն արձանագրում է հետևյալը:

Դատարանը, 20.05.2017թ., 11.07.2017թ., 12.09.2017թ. որոշումներով անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով Թաթուլ Գևորգյանին առաջադրված մեղադրանքի առնչությամբ հիմնավոր կասկածի հարցին և մասնավորապես արձանագրել. «.... միջնորդությանը կից ներկայացված նյութերը որևէ նյութով չեն համալրվել և մեղադրանքի այդ մասով որևէ լրացուցիչ փաստարկ, որը դատարանը քննած չի եղել մեղադրյալ Թաթուլ Գևորգյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորումը ընտրելիս քննարկելիս, չի ներկայացվել, որպիսի պայմաններում նախաքննության մարմնին դարձյալ չի հաջողվել դատարանի առջև ապացուցել մեղադրանքի այդ մասով հիմնավոր կասկածի առկայությունը: Ընդ որում, դատարանը նման եզրահանգման է եկել հաշվի առնելով, որ տվյալ դեպքում միջնորդությանը կից չի ներկայացվել որևէ նյութ առ այն, որ ենթադրյալ հանցագործության և մեղադրյալ Թաթուլ Գևորգյանի գործողությունների միջև առկա են օբյեկտիվ կապը հաստատող որևէ տեղեկություններ կամ փաստական տվյալներ: Ինչ վերաբերվում է վկա Շ.Պետրոսյանի լրացուցիչ ցուցմունքի արձանագրությանը և մեղադրյալի և նրա կնոջ միջև խոսակցության գաղտնալսման արձանագրությանը, ապա դատարանը պետք է միջնորդությանը կից ներկայացված նյութերը դիտարկի մեղսագրվող արարքների համատեքստում, այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում, ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիսպոզիցիայով նախատեսված

վավերապայմանների տեսանկյունից, որպիսի պայմաններում, դատարանը գտնում է, որ այդ մասով, հիմնավոր կասկածի առկայությունը մեղադրյալ թաթուլ Գևորգյանի գործողություններում բացակայում է»:

Տվյալ միջնորդությունը քննարկելիս դատախազ Վ.Դոլմազյանը հաստատել է, որ մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով որևէ փոփոխություն չի կրել, հետևաբար դատարանն այլևս անհրաժեշտություն չի համարում անդրադառնալ տվյալ հարցին՝ վերահաստատելով նախկին որոշումներով արձանագրած դիրքորոշումը:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրյալ թաթուլ Գևորգյանի առնչությանը իրեն մեղսագրվող արարքին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ա.ճուղուրյանի գործով որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ» (տե՛ս Ա.ճուղուրյանի գործով վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԵԲ-132/07 որոշումը):

Իսկ Ա.Ավետիսյանի գործով որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ (...) դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պատրանքային, իսկ հիմնական իրավունքը փաստացի կբովանդակվազրկվի:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա» (տե՛ս Ա.Ավետիսյանի գործով վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 19-20-րդ կետերը):

Դատարանն արձանագրում է, որ թիվ 58155517 քրեական գործն արդեն իսկ գտնվում է ընդհանուր իրավասության դատարանի վարույթում և մեղադրյալ թաթուլ Գևորգյանին առաջադրված մեղադրանքը ամբողջ ծավալով հիմնավորվածության և ապացուցված լինելու տեսանկյունից ենթակա է քննության, ըստ էության, քրեական գործի քննության ընթացքում, սակայն տվյալ միջնորդությունը քննարկելիս դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ կալանավորման հիմքերին և բուն գրավի միջնորդությանը:

Վերստին հաստատելով Ա.ճուղուրյանի և Ա.Ավետիսյանի գործերով որոշումներում արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2015թ. օգոստոսի 28-ի թիվ ԵԱԲԴ/0386/06/15 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է, հետևաբար մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելիս դատարանը պետք է ներկայացնի ծանրակշիռ, գործի նյութերից բխող փաստարկներ մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու բարձր հավանականության վերաբերյալ: Այլ խոսքով՝ դատարանը պետք է կիրառի դատական ակտի պատճառաբանվածության ավելի բարձր չափանիշ և հիմնավորի, որ տվյալ դեպքում առկա են այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բացառում են ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովման հնարավորությունը:

Վերոշարադրյալը բխում է անձին ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության

անհրաժեշտությունից: Հակառակ պարագայում կխախտվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի անհարկի սահմանափակման (տե՛ս, *mutatis mutandis*, Վ.Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ1/0062/06/12 որոշման 14-րդ կետը, Ա.Ջյաբլիցկի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԿԴ/0020/06/13 որոշման 14-րդ կետը):

Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Թաթուլ Գևորգյանը կալանքի տակ է 17.05.2017 թվականից:

12.09.2017թ. թվականի որոշմամբ կալանավորման ժամկետի երկարացման միջնորդությունը քննարկելիս այն հարուցած անձը փաստարկել է մեղադրյալի կալանքի ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը նրանով, որ դեռևս կան քննչական գործողություններ և գործով չհարցաքննված վկաներ, որպիսի քննչական գործողություններից կախված կարող է մեղադրանքի ծավալը փոփոխվել, որը և դատարանը հիմք է հենց այդ պատճառաբանությունը հիմք է ընդունել և կալանավորման ժամկետը երկարացրել 17 /տասնյոթ/ օրով:

Այլ կերպ ասած՝ դատարանը 12.09.2017 թվականի որոշմամբ հնարավորություն է տվել նախաքննության մարմին հարցաքննել դեռևս չհարցաքննված վկաներին և կատարել այլ քննչական գործողություններ, որոնց ընթացքում կար հավանականություն ազդելու չհարցաքննված վկաների նկատմամբ՝ Թաթուլ Գևորգյանին ազատության մեջ թողնելու դեպքում:

Ներկայումս դատախազ Վ.Դովմազյանը հաստատեց, որ 23.09.2017 թվականին կազմվել է մեղադրական եզրակացություն և գործն ուղարկվել է դատարան, Թաթուլ Գևորգյանի գործողությունները վերջնական որակում են ստացել և բոլոր հնարավոր վկաները բազմիցս հարցաքննվել են գործով ձեռք են բերվել նախաքննության կարծիքով բավարար ապացույցներ:

Այսինքն, դատարանն արձանագրում է, որ վերացել է 12.09.2017 թվականի որոշմամբ կալանավորման ժամկետը երկարացնելու և գրավի միջնորդությունը մերժելու հիմքը:

Համաձայն 77 քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը:

2. Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Բացի այդ, ԼԴ/0078/06/12 գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը (Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը):

«(...) 4. Գևորգյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակումը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, անձին ազատությունից զրկելու՝ օրենքով թույլատրված հիմքերի ցանկը սպառիչ է, հետևաբար՝ անձին ազատությունից զրկելը, որը տեղի չի ունենում օրենքով նախատեսված կարգով, կամ սահմանված հիմքերի շրջանակում, կամայական է և անօրինական: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակման յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ապահովել այդ սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Եվրոպական դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

.... Մինևույն ժամանակ, Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաբանություններում չի սահմանվում, որ դատարանը պարտավոր է յուրաքանչյուր կալանավորվածի տրամադրել որոշակի երաշխիքներով ազատ արձակվելու հնարավորություն. դատարանը միայն պարտավոր է քննարկել և լուծել այն հարցը, թե արդյոք հնարավոր է անձին ազատ արձակել այդ թվում՝ որոշակի այլընտրանքային երաշխիք ստանալով: Ուստի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա անձին երաշխիքով ազատ արձակելն առանձին դեպքերում կարող է ճանաչվել անթույլատրելի, երբ կոնկրետ փաստերով հիմնավորվում է, որ այլընտրանքային երաշխիքն ի գոյու չէ կանխել անձի ոչ իրավաչափ վարքագիծը նրան ազատ արձակելու դեպքում (տե՛ս, օրինակ՝ Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռի (Aleksandr Makarov v. Russia, 2009թ. մարտի 12, գանգատ թիվ 15217/07) 138-139 կետերը, Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի գործով վճռի (Mamedova v. Russia, 2006թ. հունիսի 1, գանգատ թիվ 7064/05) 75-77 կետերը, Սուլաոյան ընդդեմ Էստոնիայի գործով վճռի (Sulaoja v. Estonia, 2005թ. փետրվարի 15, գանգատ թիվ 55939/00) 64 կետը):

ՀՀ վճռաբեկ դատարանը ՇԴ/0244/06/13 քրեական գործով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «..... Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն հիմնավորմանը, որ մեղադրյալ Ա.Կարապետյանի ընտանիքի միակ կերակրողն լինելը, երեք երեխա ունենալը, որից երկուսն անչափահաս են, մշտական բնակության վայր ունենալը, դրականորեն բնութագրվելը դատավարության տվյալ փուլում չեն կարող հիմք հանդիսանալ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից: Նշված հոդվածի իմաստով՝ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս ի թիվս այլոց հաշվի են առնվում մեղադրյալի անձը, խնամարկյալների և բնակության մշտական վայրի առկայությունը: Մինչդեռ սույն գործով նշված հանգամանքների առկայության պայմաններում, ինչպես նաև այն պայմաններում, երբ մեղադրյալ Ա.Կարապետյանը վերականգնել է Հ.Բաղդասարյանին պատճառված վնասը, Վերաքննիչ դատարանը, առանց որևէ հիմնավորման, նշել է, որ դրանք չեն կարող հիմք հանդիսանալ Ա.Կարապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու համար:»:

Տվյալ դեպքում թաթուլ Համլետի Գևորգյանը բարձրագույն կրթություն ունի, ամուսնացած է, նախկինում դատված չէ, ունի մշտական բնակության վայր, խնամքին հինգ անձ, որոնց թվում են ֆիզ. արձակուրդում գտնվող անաշխատունակ կինը, երեք անչափահաս երեխաները, որոնցից մեկը՝ մանկահասակ և մեծահասակ ծնողը, թ. Գևորգյանը փորձեր չի կատարել թաքնվելու նախաքննության մարմնից:

Այլ կերպ ասած տվյալ դեպքում բացակայում են գրավն անթույլատրելի ճանաչելու համար օրենքով նախատեսված հիմքերը:

Բացի այդ, դատարանը գտնում է, որ գրավը կհանդիսանա լրացուցիչ երաշխիք թաթուլ Գևորգյանի ոչ իրավաչափ վարքագծի կանխման հարցում: Հետևաբար՝ դատարանը գտնում է, որ պաշտպան Երեմ Սարգսյանի միջնորդությունը՝ գրավը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ, հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Համաձայն Դատարանների նախագահների խորհրդի 16.11.2016 թվականի թիվ 150 որոշման 5-րդ կետի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս առաջին ատյանի դատարանի կողմից կայացված՝ կալանավորումը գրավով փոխարինելու, ինչպես նաև գրավը մերժելու և կալանավորումը որպես խափանման միջոց թողնելու մասին որոշումները, նախատեսված չլինելով հրապարակման պահից հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված որոշումների շրջանակում, ենթակա են բողոքարկման հրապարակման պահից տասնօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 135-137-րդ, 143-րդ, 285-րդ, 286-րդ, 376¹-րդ և 379-րդ հոդվածներով՝ դատարանը

Որոշեց

Պաշտպան Երեմ Սարգսյանի միջնորդությունը բավարարել մասնակի.

Մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու մասով պաշտպանի միջնորդությունը մերժել:

Կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը համարել թույլատրելի և գրավի գումարի չափը սահմանել 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ և այն Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտ հաշվին /900033097016/ մուծելու պահից մեղադրյալ թաթուլ Գևորգյանին անմիջապես ազատել կալանքից:

Որոշման օրինակները հանձնել միջնորդություն ներկայացրած անձին, պաշտպանին, մեղադրյալին:

Որոշումը գրավը թույլատրելի ճանաչելու մասով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

